



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ**

« 24 » Օգոստոս 2018 թ.

№ 528 -L

Հ Ր Ա Մ Ա Ն
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵՆԻՄ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ «ԳՈՐԾԱՐՔԻ ԳՆԻ»
ՄԵԹՈՂԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԽՈՒՄԲ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1141-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 7-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի մարտի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից պետական եկամուտների հավաքագրման ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված միջոցառումների կատարման պատասխանատու ստորաբաժանումներ սահմանելու մասին» N 207-Ա հրամանի 1-ին կետով սահմանված հավելվածի 7-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում ստեղծել մաքսային արժեքի որոշման «Գործարքի գնի» մեթոդի կիրառման արագ արձագանքման խումբ՝ (այսուհետ՝ խումբ):
2. Հաստատել խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:



Դ. ԱՆԱՆՅԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ
ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ «ԳՈՐԾԱՐՔԻ ԳՆԻ» ՄԵԹՈՂԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԱԳ
ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԽՄԲԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Արտակ Մանուկյան Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի մաքսային հսկողության
վարչության պետ

Անդամներ՝

Ֆելիքս Մելքոնյան Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի վարչարարության
մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման
վարչության Եվրասիական տնտեսական միության
օրենսդրության մեթոդական ապահովման բաժնի պետ

Անդրանիկ Գևորգյան Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության
մաքսային գործի և մտավոր սեփականության
պաշտպանության ընթացակարգերի բաժնի պետի
տեղակալ

Տիգրան Մինասյան Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի մաքսային հսկողության
վարչության սակագնային կարգավորման և
հսկողության բաժնի պետ

Հակոբ Ավագյան Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի
կառավարման խորհրդի անդամ, ՓՄՁ ասոցիացիայի
գործադիր տնօրեն